

ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

02.04.2014

Ապրիլի 2-ին Գեղարքունիքի մարզպետարանում մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը անցկացրեց աշխատանքային խորհրդակցություն, որին մասնակցում էր նաև 'Հայջրմուղկոյուղի' ՓԲԸ տնօրեն Պատրիկ Լորենը: Խորհրդակցության ընթացքում մարզի մի շարք համայնքերի ղեկավարների հետ քննության առնվեցին համայնքներում խմելու ջրի մատակարարման համակարգերի նորացման, ջրամատակարարման սպասարկման բարելավման հետ կապված խնդիրներ: 'Հայջրմուղկոյուղի' ՓԲԸ տեխնիկական տնօրեն Վարդան Մելքոնյանը ներկայացրեց այն համայնքների ցանկը, որտեղ 2013 թվականին իրենց պատվիրատվությամբ իրականացվել են խմելու ջրի մատակարարման համակարգերի նորացման եւ ջրամատակարարման բարելավման աշխատանքներ: Նա նաև հրապարակեց այն համայնքերի ցանկը, որտեղ 2014 թվականի ընթացքում արդեն սկսվել կամ պետք է սկսվեն ջրամատակարարման համակարգի նորացման աշխատանքները: Ասիական զարգացման բանկի՝ եւ Վերակառուցման եւ զարգացման Եվրոպական բանկի՝ միջոցներով, ըստ զեկուցողի, խոշոր ներդրումներ են իրականացվելու Գեղարքունիքի մարզի Մարտունի, Մեւան, Ճամբարակ, Գավառ քաղաքներում, Լճաշեն, Սարուխան, Գանձակ, Նորատուս, Կարմիրգյուղ, Չկալովկա, Ծովագարդ, Ներքին Գետաշեն համայնքներում:

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանն իր խոսքում նշեց, որ մի շարք գյուղական համայնքներ արդեն ցանկություն են հայտնել՝ իրենց բնակավայրերի խմելու ջրի մատակարարման համակարգերը հանձնել 'Հայջրմուղկոյուղի' ՓԲԸ կառավարմանը: Նա հանձնարարեց Գեղարքունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչությանը՝ մեկշաբաթյա ժամկետում համապատասխան համայնքերի եւ 'Հայջրմուղկոյուղի' ՓԲԸ ղեկավարության հետ ավարտել փաստաթղթավորման եւ ջրամատակարարման համակարգերի հանձնընդունելության հետ կապված աշխատանքները: Նախնական տվյալներով՝ 'Հայջրմուղկոյուղի' ՓԲԸ կառավարման ոլորտում մոտակա ժամանակներում հայտնվելու են Ծաղկունք, Ծաղկաշեն, Գեղամավան, Դոմաշեն, Ծովագյուղ, Սեմյոնովկա համայնքները: Իսկ Գեղհովիտի ընդգրկման հարցը կքննարկվի տեղում, առաջիկա շաբաթվա ընթացքում:

Իր խոսքում Պատրիկ Լորենը նշեց, որ արդեն իրենց ընկերությունը կարողանում է գտնել միջոցներ եւ էականորեն բարելավել մարզի խմելու ջրի մատակարարման համակարգը, իսկ վերջին երկու տարիներին գրանցված առաջընթացը լրիվ տեսանելի է ամենատարբեր համայնքների բնակիչների համար: Ամփոփելով հանդիպման արդյունքները՝ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանն իր գոհունակությունը հայտնեց մարզի համայնքերի եւ 'Հայջրմուղկոյուղի' ՓԲԸ տնօրինության համագործակցված աշխատանքից:

Ես համոզված եմ, որ առաջիկա երկու տարիների ընթացքում մարզի բոլոր համայնքերում լուծված կլինեն խմելու ջրի մատակարարման բարելավման խնդիրները: Համագործակցված աշխատանքը շատ համայնքների համար համոզմունք դարձավ՝ Հայջրմուղկոյուղի՝ ՓԲԸ կառավարման տիրույթում հայտնվելու համար: Եվ քանի որ Հայջրմուղկոյուղի ՓԲԸ տնօրինության խոսքը դարձել է գործ, համագործակցությունը համայնքերի հետ դրվում է բարձր հիմքերի վրա, ինձ մնում է հայտնել իմ շնորհակալությունը եւ նպաստել այդ համագործակցությանը,- իր խոսքը եզրափակեց Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը: